

Լիզիտա Գրիգուլե

Լատվիայի համալսարան

OSCE/HCNM բազմալեզու կրթության փորձագետ

**ՎՐԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԱՍԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄ:
ՏԵՂԱԿԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆԶԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՓՈՔՐԱՍԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈՒՈՒՄ**

ՀԱՍՏԱՌՈՏԱԳԻՐ

2004 թվականից մի քանի տեղական և միջազգային կազմակերպություններ աշխատում էին լեզվի քաղաքականության և բազմալեզու կրթության վրա Վրաստանում: Նրանց ակտիվությունների արդյունքները և տեղական նախաձեռնությունների փորձը ապացուցում են, որ երկլեզու մոդելները հաջողությամբ աշխատեցին Վրաստանի հանրակրթական դպրոցներում: Այնպես որ, երաշխավորված է բազմալեզու կրթության, որպես պետական լեզվի յուրացման և քաղաքացիական ինտեգրման, մոդելի ներդրում: 2008 թվականի ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գերագույն հանձնակատարի ֆինանսական աջակցությամբ կազմվեց քաղաքականության փաստաթուղթ «Ազգային փոքրամասնությունների ինտեգրումը բազմալեզու կրթության միջոցով» և 2009-2014 թվականներին նրա ներդրման պլանը: Այս պլանի համաձայն, Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը սկսել է բազմալեզու ուսուցման աջակցության ծրագիր: Կազմվել է բազմալեզու կրթության մի քանի մոդել և ընտրելու և ներդնելու համար ներկայացվել է դպրոցներին:

Հոդվածի նպատակն է ներկայացնել բազմալեզու կրթության ծրագրերը, քննարկել ներդրման սկզբնական փուլում առկա հիմնախնդիրները և առաջ քաշել բանավեճ Վրաստանում բազմալեզու կրթության բարեփոխման աջակցության ներուժի մասին՝ կրթության մասնագետների ակտիվ ընդգրկվածությամբ:

Նախաբան

Երկլեզու կրթությունը «շատ կոմպլեքսային երևույթի անչափ պարզ բնութագիրն է», – ասում է Կոլին Բեյկերը, որն անվանի հետազոտող է երկլեզվության և բազմալեզվության բնագավառում: CCIIR-ի երկարատև աշխատանքի հետևանքով Կոլին Բեյկերի գիրքը թարգմանված է և աղեն մատչելի է վրաց լեզվով:

Յանկասգաժ կրթական հաստատություն, որ սկսում է բազմալեզու կրթություն, պետք է ընդունի որոշում, կապված ուղեցույց ծրագրի ընտրության և զարգացման հետ և մասնապես է վճռի այն գործնական հարցերը, որոնք առաջ կքաշվեն ընտրված ծրագրի շրջանակներում:

Բազմալեզու կրթության ծրագիրը հանդիսանում է ընդլայնված ուսումնական

պլան, որում նկարագրված է երկու կամ երբեմն երեք լեզվով ուսուցման ընթացակարգը, նաև ամբողջությամբ համակարգը (ուսուցման բովանդակությունը, ուսուցման մեթոդները և այլն), որոնք կիրառվում են հիմնական նպատակին հասնելու համար:

Բազմալեզու կրթության փորձը և նրա պլանավորումը հիմնված է միասնական որոշումների հիման վրա ընդունված և համաձայնեցված նպատակների վրա, որոնք ուղղորդված են լեզվի յուրացմանը և ուսուցման ժամանակ լեզուների առանձնացմանը:

Ելնելով երկլեզու կրթության նպատակներից՝ երկլեզվության վերաբերյալ անցկացված հետազոտություններում ներկայացված է խմբավորումը, որը երկլեզու կրթությունը բաժանում է տարանցիկ և պահպանող երկլեզու ծրագրերի: Տարանցիկ երկլեզու կրթությունը նպատակադրում է երեխայի տեղափոխում մայրենի լեզվից դոմինանտ, մեծամասնության լեզվին, պահպանող երկլեզու կրթությունը նպաստում է երեխայի մայրենի լեզվի լիարժեք կերպով զարգացմանը և նաև երեխայի կողմից իր մշակութային նույնականության իմաստավորմանը: Տարբերություն կա նաև ստատիկ պահպանող երկլեզու կրթական ծրագրի և զարգացնող պահպանող երկլեզու կրթական ծրագրի նպատակների միջև: Ստատիկ պահպանող երկլեզու կրթության ծրագրի նպատակն է պահպանել աշակերտի մայրենի լեզվի իրազեկությունն այն մակարդակով, ինչ մակարդակով աշակերտը գնացել է դպրոց: Ջարգացնող պահպանող երկլեզու կրթական ծրագրի նպատակն է աշակերտի մայրենի լեզվի տիրապետումը լիարժեքորեն զարգացնել և ապահովել աշակերտի երկակի գրագիտություն: Այս գործընթացն անվանում են հարստացնող կամ զարգացնող երկլեզու կրթություն փոքրամասնությունների աշակերտների համար:

Երկլեզու ծրագրի ընտրության մասին որոշումը պետք է հիմնվի սոցիալական և սոցիո-մշակութային հասկացության վրա, նաև երկլեզվության կոգնիտային և զարգացնող գործընթացների և երկրորդ

լեզվի յուրացման հետ կապված տեսությունների վրա:

Ընդհանրապես, երկլեզու կրթության նպատակները բոլոր երկրներում սահմանվում են կրթության նախարարության կողմից, ինչը համապատասխանում է երկրում գործող կրթական և լեզվական քաղաքականությանը: Հաճախ հասարակության տարբեր պահանջների հիման վրա, երկլեզու կրթության նպատակներին հասնելու համար տեղի է ունենում մի քանի ծրագրի և դիդակտիկական ուղիների առաջարկում և զարգացում: 1970-ական թվականների հետազոտողները դաստասեցին երկլեզու կրթության տարբեր մոդելներ/մոդուլներ:

Երկլեզու	կրթության	մոդելները
հանդիսանում	են	հիմնական
զադափարական	հասկացությունների	ժողովածու, որը բնորոշում է տարբեր մոտեցումներ՝
	լեզվի	կիրառության,
	պլանավորման և վերլուծության	ժամանակ՝
	ինչպես և երբ պետք է տեղի ունենա	լեզուների
	առանձնացում և նրանց ինտեգրում	երկլեզու
	դասարանում: Երկու կամ ավելի	լեզուների
	ռազմավարական	կիրառության
	պլանավորումը ուսումնական	պլանի
	շրջանակներում հանդիսանում է	երկլեզու
	կրթության մեթոդաբանության	հիմնական
	գործառույթը:	

Դասասենյակում և ուսումնական պլանի շրջանակներում երկու լեզվի բաշխումը, երկու լեզուների սահմանազատումը և ակներև սահմանների որոշումը հաճախ սոցիոլեզվաբանների, երեխաների զարգացման մասնագետների և կրթության փորձագետների քննարկման առարկան է:

Երկլեզու դասասենյակում լեզուների առանձնացման և երբեմն նրանց ինտեգրման համար գոյություն ունեն տարբեր պատճառներ: Եթե երկլեզու կրթության նպատակն է լեզվական զարգացում ստանալը մեծամասնության լեզվով (օրինակ՝ տարանցիկ երկլեզու կրթություն), ապա լեզուների ինտեգրումը նպատակաուղղված կլինի նրանց վերջնական առանձնացմանը:

Եթե երկլեզու կրթությունը ձգտում է փոքրամասնության լեզվի պահպանմանը և զարգացմանը, այս դեպքում կարևոր է լեզուների առանձնացումը: Գասարանական ակտիվություններում ակներև ժամանակ և տարածք պետք է լինի տրամադրված փոքրամասնության լեզվի համար: Անհրաժեշտ է սահմանել հստակ սահմաններ փոքրամասնության լեզվի և մեծամասնության լեզվի առանձին օգտագործման միջև: Առանց սահմանների և առանձնացման հնարավոր է մեծամասնության լեզվի կիրառումն աճի փոքրամասնության լեզվի հաշվին, իսկ երկրորդ դեպքում կարող է այնպես պատահել, որ ուսումնական գործընթացի հիմնական մասն ընթանա փոքրամասնության լեզվով և մեծամասնության լեզուն միայն ձևական կողմը պահպանի

Բեյկերը (1996) լավ է նկարագրել այն չափումները, որոնցում կարելի է լեզուներն առանձնացնել. լեզուների առանձնացումը կարող է իրականացվել առարկայի, անհատի, ժամանակի, տեղի, միջին (անցումային) ակտիվության, ուսումնական պլանի նյութի և աշակերտների օգնությամբ: Հաճախակի անցումը երկու կամ ավել լեզուների միջև երկլեզու դասասենյակում սովորական երևույթ է: Գոյություն ունի նրա միտում, որ երկլեզու դասասենյակում երկու լեզվի զուգահեռ կիրառությանը կանոնավոր, գործնական տեսք տրվի, սակայն ոչ թե որպես նախօրոք պլանավորած ուսանման և ուսուցման ռազմավարության ձևով: Ընդհանրապես բովանդակության ռեպլիկացիան և կրկնօրինակումը վնասակար է երկլեզու դասարանի մեթոդաբանության մեջ:

Հետազոտողների պնդմամբ, նշանակալի է, որ ուսումնական պլանում տեղի ունենա յուրաքանչյուր լեզվի համար ժամանակի բաշխում: Լեզուների միջև անհրաժեշտ է որոշակի հաշվեկշռի գոյություն (օրինակ՝ 50%/50%, կամ 75%/25%), իսկ ծրագրի տևողությունը, առավելապես կազմում է 4-6 տարի, սակայն ժամանակից ավելի կարևոր է նպատակը, գործողությունը և մեթոդը, որի շրջանակներում կիրառվում են

երկու լեզուները: Գաղափարի արժեքն այն է, որ դպրոցը և մանկավարժները պլանավորում են երկու լեզուների ռազմավարական կիրառություն, գիտակցված մտածում են երկու լեզուների կիրառության մասին ուսումնական պլանի և դասասենյակի շրջանակներում, նաև տեղի է ունենում գործընթացների արտացոլում և քննարկում, նաև ուսանողների ճանաչողական խթանում:

Լիագորագրման և մոնիտորինգի ժամանակ ուշադրություն պետք է տրամադրվի լեզուների առանձնացմանը:

Մենք կարծում ենք, որ ծրագիրն իրականացնողները ցանկանում են տեսնել ժամանակի և ռեսուրսների արդյունավետ կիրառում, նպատակների հստակ ցուցադրում և տվյալ մոդելի հետ կապված խնդիրների լուծման առաջընթաց:

Բազմալեզու կրթության ծրագրերի զարգացումը մինչև օրս՝ հիմնախնդիրներ և հեռանկարներ

2010 թվականի օգոստոսի 20-ին Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը հաստատեց բազմալեզու կրթության ծրագրի կանոնադրությունը: Մա առաջընթաց քայլ է, որն ուղղված է փոքրամասնությունների կրթության որակյալ և կայուն զարգացմանը: Ծրագրում նկարագրված են Վրաստանի համար ընդունելի բազմալեզու կրթության տեսակները: Գալոցները կազմել են իրենց ծրագրերը, որոնք ներկայացրել են հաստատման: Տվյալ ծրագրերում լավ երևում է բազմալեզու կրթության նշանակության բավականին բարձր գիտակցումը և այն ընդունելու ցանկությունը: Վրաստանի համար բազմալեզու կրթության ծրագրերի հաստատումը և ձևակերպումը չի եղել մեկօրյա երևույթ, այլ սա այն նշանակալի գործունեության արդյունքն է, որ 6-8 տարվա ընթացքում իրականացնում էին տեղական և միջազգային փորձագետները և կազմակերպությունները:

Ուրիշ ետխորհրդային երկրների նման, գործընթացը սկսվել է մի քանի մոտեցումներ կազմելով, որոնք միտված էին պետական լեզվի յուրացմանը: Կազմվել են նաև նյութեր և վրացերենի, որպես երկրորդ

լեզվի, ուսուցիչների համար անցկացվել են վարժանքներ: Այս գործընթացը շարունակվեց լեզվական վիճակի վերլուծությամբ, նաև փոքրամասնությունների կրթության տարբեր մոդելների փորձարկումով և լեզվական քաղաքականության ձևավորմամբ:

Վերջին տարիների ընթացքում քննվել, փորձարկվել և Վրաստանի վիճակին են հարմարեցվել և իրականացվել բազմալեզու կրթության տարբեր տեսակներ: Եկեք անդրադառնանք բազմալեզու կրթության այն ծրագրին (իրականացվել է շվեյցարական „CIMERA” կազմակերպության կողմից և OSCE/HCNM -ի ֆինանսական աջակցությամբ), որն ընթանում էր երկու ուսումնական տարվա ընթացքում (2006-2008) Քվեմո Քարթլիի և Մամգիսե-Ջավախեթիի 12 դպրոցներում: Դպրոցներին ծանոթացրին բազմալեզու կրթության տարբեր մոդելներ, բացի այդ, Մառնեուլիի շրջանի ռեսուրս-կենտրոնի և «Բաց հասարակություն՝ Վրաստան» հիմնադրամի աջակցությամբ, ուսուցիչների մի խումբ Լիա Թուշուրիի ղեկավարությամբ նախաձեռնություն հանդես բերեց և փորձարկեց տարանցիկ և պահպանող մոտեցումները: Սուբմերսիոն մոտեցումը իրականացվեց երկու գյուղերի՝ Թազաքենդի և Առաջին Քեսալոյի, դպրոցներում: Այս դեպքում կար նրա փորձ, որ ադրբեջանցի երեխաներն ընդգրկվեին վրացալեզու դասարանների մեջ, որպեսզի նրանք վրաց լեզու սկսեին սովորել վրացական շրջապատում: Հետաքրքիր է, որ դուալ երկլեզու կրթությունը կազմակերպվեց ք.Թբիլիսիի թիվ 41 միջնակարգ դպրոցում: Տվյալ մոդելի համաձայն, ուսումնական գործընթացի կեսն ընթանում է ուկրաիներեն, իսկ երկրորդ կեսը՝ վրացերեն: Որոշ դպրոցներ ունեն առարկաները երկրորդ լեզվով դասավանդելու փորձ, ինչը բխում է մայրենի լեզվով խոսող ուսուցիչների սակավությամբ:

2009 թվականի հուլիսին Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից, բազմալեզու կրթությանը նպաստելու նպատակով, անցկացվեց ոչ վրացալեզու դպրոցների տնօրենների հարցում բազմալեզու կրթության փորձարկային

նախագծի շրջանակներում: Տվյալ հարցման նպատակն էր ի հայտ բերել դպրոցների հետաքրքրությունները և պատճառաբանվածությունը, թե որքանով էին պատրաստ բազմալեզու կրթության նախագծի իրականացման համար: Դպրոցների տնօրեններին հնարավորություն տրվեց ծանոթանալու երկլեզու կրթության 8 ծրագրի, որոնք հիմնված էին վրացերեն բովանդակության և փորձի վրա, նրանք նաև պետք է նշեին, թե նրանցից որն էր ընդունելի սպեցիֆիկ դպրոցական միջավայրի հարաբերությամբ, ունեցած ռեսուրսների, ծնողների սպասումների և աշակերտների բնութագրիչների տեսանկյունից:

Դպրոցների (N = 263) պատասխաններից պարզվեց, որ ամենից շատ հեղինակություն վայելողը (1) ծրագիրն է, որտեղ կարողությունների և գրագիտության զարգացումը մայրենի լեզվով և պետական լեզվով հավասար է: Մայրենի լեզվից պետական լեզվին անցկացնելու համար միտված ծրագիրը (4) երկրորդ դիրքում հայտնվեց: Հաջորդ նշանակալի քայլը ծրագրի զարգացման համար «Բազմալեզու կրթությունը Վրաստանում» գիտաժողովն էր, որն անցկացվեց MoES-ի կազմակերպմամբ 2009 թվականի նոյեմբերի 27-ին: Գիտաժողովը նվիրվեց կուտակված փորձի փոխանակմանը, հարցումների արդյունքների վերլուծությանը, համագործակցության խորացմանը տեղական և միջազգային մասնագետների միջև: Ծրագիրը նախօրոք էր պատրաստված: Գիտաժողովի շրջանակներում տեղի ունեցավ իրականացված նախագծի նախնական արդյունքների ներկայացում և նրանց գնահատում:

ԾՐԱԳՐԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

1. **Չարգացող բազմալեզու կրթության ծրագիր**՝ Ազգային ուսումնական պլանով սահմանված առարկաների և առարկաների խմբերի ուսուցումն ընթանում է հավասարաչափ, ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզվով (օրինակ՝ 50%-50%) և նվաճվում է հավասարաչափ բարձր լեզվական իրազեկություն ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզվից:

2. Տարանցիկ/անցումային բազմալեզու կրթական ծրագիր՝ ուսուցումն ընթանում է ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզվով, թեպետ պետական լեզվով ուսումնական առարկաներ սովորելն աստիճանաբար ավելանում է և փոփոխվում տեղի է ունենում անցում մայրենի լեզվից պետականի:

3. Մայրենի լեզվի աջակցության բազմալեզու կրթական ծրագիր (միակողմանի իմերսիա)՝ Ազգային ուսումնական պլանով սահմանված առարկաների և առարկայական խմբերի ուսուցումը տեղի է ունենում պետական լեզվով, մայրենի լեզուն դասավանդվում է որպես առարկա՝ առավելագույն ժամային ծանրաբեռնմամբ:

4. Բազմալեզու կրթական ծրագրեր պետական լեզվի պահպանման համար (միակողմանի իմերսիա)՝ առարկաները և առարկայական խմբերը դասավանդվում են Ազգային ուսումնական պլանի համաձայն, պետական լեզվով: Պետական լեզուն դասավանդվում է նաև, որպես առարկա (նաև ժամերով), ինչի պատճառով խախտվում է հարաբերակցությունը պետական լեզվի խորացված ուսուցմամբ:

5. Երկակի լեզվական իմերսիայի բազմալեզու կրթական ծրագիր՝ Ազգային ուսումնական պլանով սահմանված առարկաների և առարկայական խմբերի ուսուցումն ընթանում է հավասարաչափ, ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական լեզվով: Աշակերտների քանակակազմը հավասարաչափ է բաշխված և ներկայացնում են ինչպես վրացալեզու, այնպես էլ ոչ վրացալեզու աշակերտներ:

6. Խառը բազմալեզու կրթական ծրագրեր՝ ուսումնական գործընթացը սկսվում է հիմնականում երկրորդ լեզվով (օրինակ՝ ռուսերեն): Գրաճանաչությունը մինչև սկզբնական փուլ զարգացնելուց հետո՝ երկրորդ լեզվով, ուսումնական գործընթացն ընթանում է հետևյալ սկզբունքով. 1) առարկաները դասավանդվում են միայն

պետական լեզվով կամ 2) մայրենի և պետական լեզվով խառը, որի նպատակն է ինչպես պետական, այնպես էլ մայրենի և աշակերտներին անհրաժեշտ այլ լեզվի զարգացում միաժամանակ:

Տեսք աղյուսակը՝ 1. Ցուցադրական մոդելներ արտացոլող ծրագրի տեսակներ.

Ծանոթություն 1՝ նմուշները ներկայացված են ծրագրի նպատակների և լեզվի առանձնացման համակարգի վիզուալ ցուցադրման համար, որը հիմնվում է կոպիտ հաշվարկման վրա, մոտավորապես շաբաթական 24 դաս (մի դասը 4%): Այս մոդելներն ընդգրկում են նաև արվեստի դասեր առաջին (մայրենի) լեզվից (L1) և վրացերենը որպես երկրորդ լեզու: Այս դեպքում աշակերտն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում շփվում է վրացերենի հետ: Մոդելներն առաջնային տեսքի են և հուսով ենք, որ այս պրոցեսները կհարմրեցվեն տեղի մանկավարժների կողմից, ինչը կհիմնվի փորձարկման հետևանքով ստացած փորձի վրա:

Ծանոթություն 2՝ իրական կյանքում շատ ավելի բարդ է ցանկացած մոդելի իրականացումը, քան այդ կարող է արտացոլվել որևէ մոդելում (տեսք՝ նմուշ 6.1-6.3): **Նախ՝** սա վերաբերում է այն դպրոցներին, որտեղ ուսուցման լեզուն ռուսերենն է: Մենք ունենք ռուսալեզու դպրոցների առնվազն երկու տարբերվող խումբ.

1) ռուսական դպրոցներ, որոնք փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում են գտնվում: Առավելագույն դեպքերում ռուսերենը աշակերտների համար մայրենի լեզու չէ, թեպետ ուսուցումը ռուսերեն է ընթանում: Այդ պատճառով դպրոցական շրջանի նախնական փուլն օգտագործվում է ռուսերենի, որպես ուսուցման լեզվի տիրապետման համար, այդ պատճառով աշակերտները չունեն ոչ մի պայման պետական լեզվի ուսուցման համար ... Վրացերենը, որպես ուսուցման լեզու, նման տիպի դպրոցներում կիրառում են ավելի ուշ,

ավարտական աստիճանում: Այս ժամանակ կարող է կիրառվել ծրագիր, որն ապահովում է աշակերտների առաջին լեզվի պահպանումը վաղ, միջին կամ ուշ փուլում:

2) Ուսալեզու դպրոցները, որտեղ սովորում են էթնիկապես և լեզվաբանորեն խառը աշակերտներ, բազմալեզու և բազմազգ միջավայրում: Այս դեպքում վրացերենը, որպես ուսուցման լեզու, կարող է կիրառվել ավելի վաղ փուլում, մասնաճյուղակցության համար՝ նրա նախատեսմամբ, որ աշակերտներն ավելի են տիրապետում հաղորդակցական կարողությունների համար բավական բազիսային վրացերենի:

Ճանաչություն 3՝ Թբիլիսիի որոշ դպրոցների տնօրեններ սահմանել են անցումային դպրոցական ծրագիրը: Չնայած դա կախված չէ ծրագրի տեսակների նախնական ընդհանուր բնութագրիչներից, ինչը պահանջում է հիմնական նպատակի իրականացում կամ աստիճանական անցում պետական լեզվին: Նա մատնանշում է, թե որքանով կա պատրաստականություն դպրոցի կողմից բազմալեզու կրթության համար, և որքանով է դպրոցը հանդես բերում նախաձեռնություն՝ ընդգրկվել համալիր կերպով ընթացող բարեփոխման մեջ:

2010 թվականի հունիսին տարածաշրջանային «Բազմալեզու կրթության աջակցության ծրագիր» սեմինարների ընթացքում մասնակիցները (փորձարկային դպրոցների ադմինիստրատորներ, ուսուցիչներ, դպրոցների վարչության անդամներ և հասարակության ներկայացուցիչներ) անցան դպրոցական ծրագրերի և ապլիկացիոն ձևերի լրացման վարժանք: Դպրոցի թիմը վերապատրաստվեց, ձեռք բերեցին կարողություններ, թե ինչպես ձևակերպեն ծրագրի գլխավոր նպատակները: Ինչ վերաբերում է հատուկ կրթական ծրագրերի նպատակներին, դպրոցի ընդհանուր առաքելության համար նշանակալի է, որ դպրոցի թիմը լինի կողմնորոշված նախանշված նպատակների իրականացմանը: Ծրագրի նպատակները կապված են բազմալեզու կրթության իրականացման հիմնական ասպեկտների

հետ՝ կրթական միջավայր, ուսումնական մեթոդիկա, աշակերտների լեզվական կարողություններ, ակադեմիական գիտելիքի գնահատում, բազմալեզու կրթության մենեջմենտ և գնահատում, ծնողների և հասարակության ընդգրկվածություն:

Բոլորը համաձայնում են, որ նպատակների ձևակերպումը, խնդիրների և համապատասխան միջոցառումների անցկացումը բարդ խնդիր է: Նույնը կարելի է ասել՝ կապված սպասվելիք արդյունքների նախիմացության հետ: Սի կողմից՝ մենք աշխատում ենք այնպիսի հանձնարարությունների ներդրման վրա, որոնք չափելի են, մյուս կողմից՝ կրթությունը արտադրության սպրանք չէ: Մենք չենք կարող սահմանել, թե ուսուցչի կոնկրետ ուղղությամբ աշխատանքը (օրինակ՝ դիդակտիկ նյութի օգտագործում) կբարձրացնի արդյոք արդյունքը 15%-ով, սակայն մենք կարող ենք փորձել, որ այն արտացոլվի դպրոցի համապատասխան ծրագրի վրա, ինչպիսիք են՝ ա) ուսուցչի կողմից յուրացված ինտերակտիվ ուսուցման մեթոդները, որոնք նա կիրառում է շաբաթը մեկ անգամ, բ) դպրոցը կազմակերպում է այսպես կոչված «երկու ծնողական օր» ուսումնական տարվա ընթացքում երկու անգամ:

Որպեսզի ձևը ընկալելի և հասկանալի լինի, հարցվողին խնդրում են լրացնել և ընդգծել համապատասխան նպատակը և ծրագրի տեսակը: Դպրոցը պատճառաբանված է մասն մտածել և նախանշել ծրագրերի ճիշտ իրականացման ուղիներ (ուսուցչի կողմից)՝ առարկա, թեմա, ժամանակ, դասաժամեր, վայր, ուսումնական պլան, գործառույթներ, ուսանողներ):

Դպրոցներից պահանջվում է ապահովել բազմալեզու կրթության ընտրված մոդելը և մասն իրականացնել նախանշված պլանը, առնվազն երկու ուսումնական տարվա ընթացքում: Այս պահանջն արտացոլում է փորձարկման յուրահատկությունը: Այս ժամանակվա ընթացքում դպրոցը կարող է սկսի մասնակիորեն իրականացնել բազմալեզու կրթությունը, մի քանի դասարանում, ինչը

կախված է ունեցած ռեսուրսներից: Թեպետ, գերադասելի է, որ դպրոցը ցուցաբերի «մեծ պատկեր», թե ինչպես է մտադիր շարունակել սպազա գործունեությունը: Անհրաժեշտ է նախատեսել երեխայի կոգնիտային զարգացման սկզբունքները և նպատակադրում է փոքրամասնությունների կրթության ընդհանուր մակարդակի բարձրացում:

III. Բազմալեզու կրթական ծրագրի իրականացման պլան.

1. Լեզուների բաշխում (լրացրե՛ք և ընդգծե՛ք ձեր դպրոցին համապատասխան նպատակը և ընտրած ծրագիրը/մոդելը):

Նազան/ժեսև	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
ՅԻՆՆՈՒՆԻ ըՆԴ ԵՎ ՆՈՒՆՆԱԴՆՈՒՆ												
Մաթեմատիկա, Տեխնոլոգիաներ և Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, Վարչական գործառնություն, Տնտեսագիտություն, Մաթեմատիկա, Տեխնոլոգիաներ և Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, Վարչական գործառնություն, Տնտեսագիտություն, Մաթեմատիկա												
ՄԱՐԿԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԿԱԿԱՆ ՄԱՐԿԱԿԱՆ												

ՀԻԴ Կոնդուրի միջնակարգ դպրոց

Ապագա հեռանկարներ

Վերջին հետազոտությունները ցույց են տալիս դպրոցի կառավարման կարողունակությունը զարգացման վերջին շրջանում, ինչը դպրոցի կենտրոնացման և համակարգի բարելավման արդյունք է: Բացի այդ, նշանակալի է ավանդական ձևեր՝ վարժանքները, ինչը երաշխավորված է, որպեսզի հարստանան կադրերը տեղեկության տարբեր միջոցներով, շեշտադրությունն արվում է թիմային աշխատանքի և ուսուցիչների մասնագիտական զարգացման վրա:

Դպրոցի բազմալեզու կրթական ծրագիրը նախատեսում է դասարանում ուսուցման համար երկու (կամ ավելի) լեզուների կիրառում և կրթական նյութի յուրացում հայերեն / անգլիերեն և վրացերեն լեզուներով: Լեզուների այսպիսի բաշխումը հիմնվում է ծրագրի լեզվաբանական նպատակներ վրա.

Ազգային ուսումնական պլանով սահմանված առարկաների և առարկայական խմբերի ուսուցումը ընթանում է պետական լեզվով, մայրենի լեզուն դասավանդվում է, որպես առարկա առավելագույն ժամային ծանրաբեռնամար (մայրենի լեզվի աջակցության բազմալեզու կրթական ծրագիր):

- Մանկավարժական ուսումնական խմբի ստեղծում՝ ուսուցչի աշխատելու համար միևնույն դասարանի աստիճանի համար:
- Մենտորների և խորհրդատուների պատրաստում բազմալեզու ուսուցման համար:
- Բազմալեզու կրթության փորձված ուսուցչի կցում, որպես վարժող, այսպես կոչված «տան փորձագետ»:
- Դպրոցի վարչության վերապատրաստում, թե ինչպես կառավարեն բազմալեզու դպրոցը:

6.2. შეტყულებული მულტილინგუალობის განათლების კატეგორია

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII

6.3. შეტყულებული მულტილინგუალობის განათლების კატეგორია

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII

გ რ ა წ ა ს უ ნ ი თ ვ ი რ ს

ბაქმან, 2006 - Bachman, C. (Ed.) (2006). *Language policies and education in multilingual societies*. Conference Proceedings 7. CIMERA, Geneva.

ბეკერ, 2001 - Baker, C. (2001). *Foundation of bilingual education and bilingualism*. Clevedon: Multilingual Matters.

ბათელასანი, 2002 - Batelaan, P. (2002). Bilingual education: The case of Latvia from a comparative perspective. *Intercultural Education*, 13(4), 359-374(16).

ყრუიქიანი ხელოვნების ცენტრი, 2002; 2008 - Center for Research on Education, Diversity & Excellence. (2002). *Five standards*. Retrieved May 15, 2008, from <http://crede.berkeley.edu/standards/1jpa.shtml>

ბაქმან, 2008 - Commission of the European Communities. (2008) *Multilingualism: An asset for Europe and a shared commitment*. Communication from the commission to the European Parliament, the Council, The European Economic and Social committee and the committee of the Regions (18.09.2008). Brussels.

ლუქსემბურგის რეგიონული მინორიტეტების დაცვის კონვენცია 1992 - Council of Europe. (1992). *European charter for regional or minority languages*. Retrieved January 31, 2009, from <http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/Html/148.htm>

ლუქსემბურგის რეგიონული მინორიტეტების დაცვის კონვენცია 1995 - Council of Europe. (1995). *Council of Europe Framework convention for the protection of national minorities*. Retrieved January 31, 2009, from <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Word/157.doc>

- Կուրան, 1998 - Cuban, L. (1998). How schools change reforms: Redefining reform success and failure. *Teachers College Record*, 99(3), 53-77.
- Կումինս, 1996 - Cummins, J. (1996). Negotiating identities: Education for empowerment in a diverse society. CAFE.
- Գրիգուլե, 2007 - Grigule, L., & Perrin, A. (2007). *Multilanguage education in Georgia. Evaluation report*. CIMERA, Geneva.
- Գրիգուլե, Պերին՝Յերոնո, 2008 - Grigule, L., & Perrin, A. (2008). *Multilingual education in Georgia. Phase II. Final activity report. December 2007 – March 2008*. CIMERA, Tbilisi/Geneva.
- Կրթության ռազմավարություն և գործողության պլան ըստ 2007-2011 թվականների - The Ministry of Education and Science of Georgia. (2007) *Georgia: Consolidated Education Strategy and action Plan (2007 – 2011)*.
- Ազգային փոքրամասնությունների ինտեգրում բազմալեզու կրթության ճանապարհով, 2008 - The Ministry of Education and Science of Georgia. (2008). *National minorities integration through multilingual education. A Policy Paper*.
- Մենք սովորում ենք խաղալ, 2006 - *We are learning by playing. 111 games for multilingual education*. (2006). Cibera, OSCE/HCNM.

Ligita Grigule
University of Latvia
OSCE/HCNM Multilingual Education expert

Georgia Minority Education Reform: from local initiatives towards state planned minority education reform.

ABSTRACT

Since 2004, several local and international organizations have been addressing the issues of language policy and multilingual education in Georgia. Their project results along with the experience of local initiatives proved that multiform bilingual models had worked successfully according to the local resources and socio cultural environment. Therefore, it was recommended to integrate the multilingual education as an effective method for the language acquisition and civic integration nationwide. In 2008, with the financial support of the OSCE/High Commissioner on National Minorities the policy paper “National minorities’ integration through multilingual education” and the implementation plan was developed for 2009-2014. Based on the plan, the Ministry of Education and Science of Georgia started a multilingual instruction support program. In the framework of the program several multilingual education program options have been developed and proposed to schools for selection and implementation. The Regulations on school multilingual education programmes has been developed and approved by MoES of Georgia. The support programme also includes a comprehensive capacity building plan to raise national expertise in multilingual education.

The aim of the article is to present the developed multilingual education programmes, to share initial implementation strains and raise discussion on the potentialities of educational community’s support to multilingual education reform in Georgia.